

մը տաս ու զանոնք ցնցես , անոնց ցնցումը ինչուան սլաքին հասնելով՝ զանիկայ այնպէս կը շարժէ որ շրջանակին վրայ դառնալով՝ գիրը կը ցուցընէ . զոր օրինակ Փարիզի գործիքը շարժելով՝ մէկէն՝ ի մէկ ինչուան լիուան կը համի ցնցումը , և ուղած գրերդ տախտակի մը վրայ կը շարուին : Ի՞նկէ զատ՝ ուղած խօսքդ տպելով ալ կրնաս հաղորդել . վասն զի նոյն ասեղներով որ և իցէ խօսք կը տպուի : Ի՞նգղիայի մէջ երկաթէ ճամբաներուն վրայ կը բանեցընէն հիմա աս ելեքտրական հեռագրութիւնը ինչուան 40 մղոն տեղ . աս բանիս համար ճամբուն երկու կողմէն ցիցերու վրայ պրկած թելեր կան . անոնց քովէն անցնելու ատենդ վրանին բան մը չես տեսներ , բայց ելեքտրական զօրութեամբ աներեսոյթ սուրհանդակներ ան թելերուն վրայէն կ'երթան ու կուգան անհնարին արագութեամբ :

Ելեքտրական հեռագրի մը ծախքը հասարակ հեռագիրներուն ծախքէն քիչէ կ'ըսեն : Փարիզէն լիուան շինուած հեռագրին առաջին փորձը եղեր է աս տարի մայիսի 4^ն , ու շատ աղէկաջաջողեր է : Ալսեն թէ մօտերս Պաղպիոյ թէքը իր պալատէն ինչուան իշխանաց խորհրդարանը ելեքտրական հեռագիր մը շինել տուաւ :

Դոկուն մէջէն ալ կրնան հաղորդուիլ թելերուն մէջտեղերէն ծանրոցներ կախելով , որ խորը իշխայ . հիմա մեծ ջանք կայ որ Լոնտրայէն Փարիզ այսպիսի հեռագիր մը շինէն :

ԱՄՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինէ Բնէ հերդով համայ գէշէրը դանէր , ու դանիրէն եռու կաղնադր իսմ ուիքոթթա իւ շինէն՝ ուշըքէ ու այծու իսլէն :

Ի՞նչ ագւած կատսայի մը մէջ կը լեցընէն կաթը՝ մաղէ մը անցընելով կամ

ցանցառ լաթէ՝ որ մաքուր ըլլայ . ետքը կրակին վրայ կը դնէն , ու փայտով մը կը խառնէն ինչուան որ ձեռք դիմանալու չափ տաքնայ : Ետքը կրակէն վար կ'առնեն , մէջը կը լեցընէն կաթին շատութեանը կամքիչութեն համեմատ մակարդը , այսինքն այծուն կաթնեղէն խախացը (որ չորցուցած կը պահուի , ու ասանկ պէտք եղած ատեն՝ ջրի կամ կաթի մէջ կը հարուի) : Երբոր կաթը կը կապէ , անոյշ մածունի պէս կ'ըլլայ , որ իտալերէն ձիւնաթեա կ'ըսուի , փայտով մը կ'աւրեն կը խառնէն , ու նորէն կրակի վրայ կը դնէն միշտ խառնելով՝ ինչուան որ եփ ելլէ : Ի՞ն ատենը կրակէն վար առած կը թողուն , ինչուան որ նորէն ձեռք դիմանալու չափ պազի , որ կարենան պնտացած պանրեղէն մասունքը ձեռքով շաղուել միացընել կատսային մէջ : Երբոր բոլորը մէկէն մեծ զանգուած մը կ'ըլլայ , հաստ գերձանով մը կը կտըրտեն ինչ չափով որ կ'ուղեն , ու փայտէ կաղպարի մէջ պանրի գլուխներ կը ձեւացընեն , սըխմելով որ ջրեղէն մասունքը բը ելլէ . Երբոր պանրին զանգուածը կատսային կը հանէն , մէջը մնացած շինուկը , այսինքն կաթին ջրեղէն մասը նորէն կրակի վրայ կը դնէն , ու երբեմն երբեմն կը խառնէն , ինչուան որ ջրին երեսը փրփուր կ'ելլէ , ու կը սկսի ձեւնալ վազնատը կամ ոիքոթթան : Խնէ որ կակուղ ու փափուկ կ'ուղես , շուտով մը կրակէն ետպէտք է առնուս կատսան . իսկ թէ որ աւելի թողուս կրակին վրայ , պինդ կ'ըլլայ , ու համը այնչափ ախորժելի ըլլար : Ետքը ծակծակ դգալով կամ քամոցով ջրին երեսէն վազնատը կը ժողվէս , ու կը մնայ կաթին սերը , որ ան ալ կուրծքի հիւանդութեան գեղ կ'ըլլայ , կամ թեփի հետ խառնած հաւերուն կը տրուի , և կամ ուրիշնտանի կենդանիներու :